



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՍ**



**ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ 2022**

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

**ԹԵՄԱ ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ-ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ
ՈՒՍՈՒՑՄԱ և ՁԿԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

ԱՌԱՐԿԱ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՂԻՆԱԿ ՆԱՐԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՍԱՐԶ ԱՐՄԱՎԻՐ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Վ.ՌԵՏՈՒՆՈՒ ԱՆՎԱՆ ԹԻՎ

11 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Բովանդակություն

Ներածություն-----1

**ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ- ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ
ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ**

1.1 Խնդիրներ և լուծումներ-----5

1.2 Արդյունքներ-----13

Օգտագործված նյութեր-----14

Բովանդակություն-----2

Ներածություն

Չնայած բազմաթիվ օրենսդրական կարգավորումների, Հայաստանում ներառական կրթության գործընթացը հասարակական, դպրոցական և դասարանային մակարդակներում դեռևս հանդիպում է խոչընդոտների: Արդյունքում, երեխաները երբեմն չեն ունենում գործընթացին լիարժեք մասնակցելու և կրթության մեջ հաջողությամբ ներառված լինելու զգացողություն: Հայաստանում դասավանդման գործընթացում դեռևս պահպանվում են խորհրդային շրջանին բնորոշ մոտեցումներ և կարծրատիպեր՝ մասնավորապես՝ ուսուցչակենտրոն ուսուցումը: Տեխնոլոգիաների պակասի պատճառով Հայաստանի դպրոցներում մինչ օրս նորարարական մոտեցումների սակավություն է նկատվում:

Հայաստանում տեղի ունեցող բարեփոխումներն արտացոլում են կրթության միջազգային միտումները: Ամբողջ աշխարհում ուսուցիչները դասարանում գործ ունեն բազմազանության հետ՝ լեզվական տարբեր ունակություններ, հաշմանդամություն ունեցող երեխաներ, օժտված երեխաներ և սոցիալական տարբեր շերտերի երեխաներ: Ուսուցիչները դասավանդման նոր մեթոդների և մոտեցումների տիրապետելու կարիք ունեն: Հայաստանում ուսուցիչներից ակնկալվում է կիրառել գիտելիքների փոխանցման և կրթության կազմակերպման ամենավերջին մանկավարժական մեթոդները՝ աշակերտներին զինելով այնպիսի արժեքներով, որոնք կնպաստեն օրինակելի և հայրենասեր քաղաքացիներ պատրաստելուն: Այդուհանդերձ, դեռևս լայնորեն կիրառվում են ուսուցչակենտրոն մոտեցումները, իսկ թիրախում միջին վիճակագրական աշակերտն է: Այսպիսի մոտեցումներն արդյունավետ չեն կրթական տարբեր կարիքներ ունեցող աշակերտներին դասավանդելիս:

Ներկայումս Հայաստանում նեոարական կրթություն իրականացնող դպրոցներում ուսուցիչների փորձառության մասին հետազոտությունները սակավաթիվ են: Աշակերտների հնարավորությունների բացահայտումը մեծ նշանակություն ունի ներառական կրթության համատեքստում, քանի որ այն ուսուցիչներին հնարավորություն է տալիս ընտրելու յուրաքանչյուր աշակերտին համապատասխան մոտեցումները, հնարները ու մեթոդները:

Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում տարբերակված ուսուցման կիրառումը կարևոր մոտեցում է. այն նպաստում է բոլոր աշակերտների կրթական կարիքները հաշվի առնելուն: Տարբերակված ուսուցման իրագործումը չի պահանջում թանկարժեք տեխնոլոգիաների կիրառում. այն կարող է իրականացվել նաև դասավանդման պարզ տեխնոլոգիաների միջոցով: Մանկավարժների մեծ մասը կարևորում է ուսուցման գործընթացի հարմարեցումը աշակերտների տարբեր

կարիքներին, սակայն գործնականում քչերն են իրականացնում տարբերակված ուսուցում:

Այս փաստը կարող է պայմանավորված լինել մի շարք հանգամանքներով. դասավանդման որոշ ոճերի ավանդական կիրառումը, անհրաժեշտ պատրաստվածություն չունենալը, աշակերտների անհաջողությունները նրանց կրթական կարիքներին ու ոչ թե անարդյունավետ դասավանդմանը վերագրելը և այլն:

2

Գիտական միջավայրում մոտեցում կա տարբերակված ուսուցումը սահմանել որպես դասավանդման փիլիսոփայություն՝ հիմնված աշակերտների պատրաստվածության տարբեր մակարդակների, հետաքրքրությունների և սովորելու յուրահատկությունների վրա: Տարբերակված ուսուցման հիմնական խնդիրը յուրաքանչյուր աշակերտի սովորելու կարողության բարելավումն է:

ԽՄԲԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ- ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՐԲԵՐԱԿՎԱԾ

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՂ ԳՆԱՀԱՏՄԱՆ

1.1 Խնդիրներ և լուծումներ

Կան ուսուցումը տարբերակված դարձնելու բազմաթիվ ձևեր, որոնց կիրառման արդյունքում այն հնարավոր է համապատասխանեցնել աշակերտների բազմազան կարիքներին: Ուսուցման տարբերակումը սուկ դասավանդման ռազմավարություն չէ, այլ դասավանդելու և սովորելու նկատմամբ յուրատեսակ մանկավարժական մոտեցում:

Տարբերակված ուսուցումը, նույն նյութի դասավանդումն է տարբեր մոտեցումներով և ուսուցչի կողմից դասերի անցկացումն է՝ ելնելով յուրաքանչյուր աշակերտի կարողությունից: Յուրաքանչյուր աշակերտի կրթական կարիքներին իրոք համապատասխանող ուսուցում կազմակերպելու դեպքում ուսուցիչը դառնում է ներքոնշյալ բոլոր փուլերում որոշում կայացնող.

Ա) ուսուցման պլանավորում (նախնական գնահատում),

Բ) ուսուցման ուղղորդում (ընթացիկ կամ ձևավորող գնահատում),

Գ) գնահատող ուսուցում (ամփոփիչ գնահատում):

Գնահատումը և տարբերակված ուսուցումը փոխկապակցված են ձևավորող և ամփոփիչ գնահատումների միջոցով հնարավոր է լինում պարզել, թե որքանով է դասավանդված նյութը յուրացվել տարբեր աշակերտների կողմից:

Տարբերակված ուսուցումը ենթադրում է ուսուցման և դասավանդման նյութերի հարմարեցում աշակերտների կրթական կարիքներին և նրանց հնարավորություն է տալիս սովորելու իրենց համար ընդունելի եղանակով: Ավանդական եղանակով դասավանդումը նախատեսված է միջին վիճակագրական աշակերտի համար, այն հնացած է և խթանում է խտրականությունն այն աշակերտների նկատմամբ, ովքեր դպրոցում հաջողության հասնելու համար այլընտրանքային մանկավարժական մոտեցումների կարիք ունեն: Տարբերակված ուսուցումն այլևս դասավանդման տարբերակ չէ, այլ՝ անհրաժեշտություն: Հայաստանում վերջին տարիներին շեշտը դրվել է տարբերակված ուսուցման վրա: Օրինակ՝ Առնաուդյանը, Գյուլբուդադյանը, Խաչատրյանը, Խրիմյանը և Պետրոսյանը հեղինակել են դասավանդման տարբեր մեթոդներ և ռազմավարություններ

պարունակող մասնագիտական զարգացման ձեռնարկ ուսուցիչների համար՝ ուղղված ուսուցումն ավելի փոխներգործուն դարձնելուն: Մեկ այլ ձեռնարկի

հեղինակներ Վարդույանը, Հարությունյանը, Ջաղինյանը և Վարելյան ներկայացնում են ժամանակակից մանկավարժական մոտեցումները, տեսությունները, մեթոդները և գնահատումը: Subban (2006) և Suprayogi, Valcke & Godwin-ի՝ (2017) տարբերակված ուսուցման արդյունավետության վերաբերյալ հետազոտությունը վկայում է, որ այսպիսի ուսուցումը բարձացնում է աշակերտների մոտիվացիան, նյութի նկատմամբ հետաքրքրությունը, ուսման առաջադիմությունը, աշակերտներին հաղորդում է ինքնավստահության, իսկ ուսուցիչներին՝ սեփական աշխատանքից գոհունակության զգացում: Նույն հետազոտությամբ նաև պարզվել է, որ փորձառու ուսուցիչներն առավել հակված են տարբերակված ուսուցում իրականացնելուն, քան սակավ փորձ ունեցողները:

Հետազոտենք երեք մոտեցում, որոնք իրենց արդյունավետությունը հիմնավորել են տարբեր երկրներում իրականացված հետազոտություններով: Այս մոտեցումները ապահովում են բազմազան ձևերով դասավանդում և կարող են կիրառվել տարբեր առարկաների դասաժամերին, տարբեր դասարաններում: Դրանք ոչ միայն ուսումնառության վերջնարդյունքներն են բարելավում, այլև սովորելը դարձնում են ավելի հետաքրքիր՝ ապահովելով գործընթացի մեջ աշակերտի ներգրավվածությունը: Այդ մեթոդներն են՝ դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառություն, համագործակցային ուսումնառություն և անմիջական դասավանդում:

Դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառությունը (Peer-assisted learning strategies, PALS) հետազոտություններով արդյունավետությունը հիմնավորված դասավանդման ծրագիր է (McMaster, Fuchs & Fuchs, 2006): Վերջինիս գլխավոր նպատակը աշակերտների ուսումնառությանը օժանդակելն է հասակակիցների միջոցով: Դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառությունը նախատեսված է դասարաններում կրթական բազմազան կարիքներ ունեցող աշակերտների համար դասապրոցեսի արդյունավետ կազմակերպման և բոլոր աշակերտներին դրանում ներգրավելու համար: Քանի որ դասընկերոջ աջակցությամբ իրականացվող ուսումնառության կիրառման ժամանակ աշակերտները աշխատում են իրենց դասընկերների հետ, ուսուցիչը կարող է աշակերտներին բաժանել նրանց անհատական կրթական կարիքներին համապատասխան նյութեր: Այս մոտեցումը կիրառելիս ուսուցիչը մի աշակերտին զգուշորեն դարձնում է մյուսի գործընկերը: Այնուհետև գործընկերները իրենց կրթական կարիքներին համապատասխանող զանազան աշխատանքներ են կատարում: Զույգերը ժամանակի ընթացքում փոփոխվում են, որպեսզի աշակերտները կարողանան սովորել տարբեր դասընկերներից: Դասի ընթացքում, քանի դեռ աշակերտներն աշխատում են զույգերով, ուսուցիչը շրջում է դասարանում, հետևում աշակերտների կողմից ընթացակարգերի պահպանմանը և անհրաժեշտության դեպքում միջամտում: Ուսուցիչները օգնության կարիք ունեցող զույգին օժանդակելու համար կարող են միավորներ շնորհել: Յուրաքանչյուր գործողության ավարտին, զույգերի անդամները նույնպես միմյանց միավորներ են

տալիս: Միավորները գրանցվում են երկուսի ունեցած միավորների գրանցման թերթիկում: Որոշակի գույգեր միմյանց հետ կազմում են առանձին թիմ: Դասարանում գործում է երկու այդպիսի թիմ: Շաբաթվա վերջում գույգերը հաղորդում են տվյալ շաբաթվա ընթացքում իրենց հավաքած միավորների ընդհանուր թիվը, որոնք գրանցվում են յուրաքանչյուր թիմի հաշվին: Երկու թիմերն էլ գովեստի են արժանանում լավ աշխատանքի համար: Խրախուսման նախօրոք մտածված ձևերը շատ արդյունավետ են աշակերտների վարքի ցանկալի փոփոխությունը խթանելու համար:

Համագործակցային

ուսումնառությունը (Cooperative Learning) ռազմավարություն է, որը նախատեսված է բազմազան աշակերտներ ունեցող դասարանում, ցանկացած առարկայի շրջանակներում կիրառելու համար: Այս ռազմավարությունը մշակվել է Մինեսոթայի համալսարանի պրոֆեսորներ Roger T. Johnson & David W. Johnson-ի կողմից: Համագործակցային ուսումնառության ընթացքում աշակերտները աշխատում են միասին՝ կազմելով փոքր անհամասեռ (տարբեր կարողություններ ունեցող սովորողներից բաղկացած) խմբեր՝ առավելագույնս բարձրացնելով յուրաքանչյուրի ուսումնառության արդյունավետությունը: Ուսուցչից ցուցումներ ստանալուց հետո աշակերտներն աշխատում են առաջադրանքի վրա մինչև խմբի բոլոր անդամները հաջողությամբ հասկանան և ավարտեն այն: Համագործակցային ուսումնառությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ աշակերտները օգուտ են քաղում միմյանց գիտելիքներիցու հմտություններից և աշխատելով միևնույն հանձնարարության կատարման վրա՝ հետևում են միևնույն նպատակին: Բազմազան խմբերում իրականացվող համագործակցային ուսումնառությունը աշակերտներին նախապատրաստում է հասարակության մեջ ապրելուն: Համագործակցային ուսումնառությունը կարող է լինել ինչպես ազատ ձևաչափով, այնպես էլ հստակ կազմակերպված: Բազմաթիվ հետազոտություններ են կատարվել՝ պարզելու համար համագործակցային ուսումնառության դրական ազդեցությունը աշակերտների ուսման առաջադիմության և սոցիալական զարգացման վրա: Նրանք պարզել են, որ համատեղ ուսուցումը բարելավում է ուրիշներին արձագանքելու ունակությունը, ինքնագնահատականը, նպաստում է մտահաղացումներ և լուծումներ ունենալուն, սովորածը մի իրավիճակից մյուսը փոխանցելուն, տարբեր իրավիճակներում ստեղծագործական մոտեցումներ ցուցաբերելուն:

Ըստ Johnson, Johnson






& Holubec՝ փոքր խմբերով համագործակցային ուսումնառությունն ունի մի քանի հիմնական բաղադրիչ՝ դրական փոխկախվածություն (աշակերտներին հաջողությունը պայմանավորված է միմյանց գիտելիքներով ու հմտություններով), անհատական և խմբային հաշվետվողականության (անհատի և խմբի ներդրման գնահատում, որպեսզի խմբային աշխատանքից շահեն բոլորը), փոքր խմբում միջանձնային շփում հաստատելու և համատեղ աշխատելու հմտություններ (սոցիալական հմտությունների ձևավորում թիմային աշխատանքի համար) և հետադարձ կապ խմբի կողմից: Համագործակցային ուսումնառությունն կարող է արդյունավետ լինել, եթե

դպրոցում առկա է համագործակցություն աշակերտների և մանկավարժների միջև և նրանք իրենց ներառված են զգում գործընթացում: Միևնույն ժամանակ, աշակերտների համար կարևոր է, որ սահմանված լինեն օգնության չափանիշները, որպեսզի աշակերտներն իմանան ինչպես օգնություն խնդրել, այնպես էլ այն առաջարկել: Համագործակցային ուսումնառության շրջանակներում կրթության առանձնահատուկ պայմանների տարատեսակ կարիքներ ունեցող աշակերտների արդյունավետ ներառման նպատակով հարկավոր է դասավանդումն իրականացնել բազմազան մոտեցումների կիրառմամբ: Կրթության առանձնահատուկ պայմանների ծանր կարիքներ ունեցող աշակերտների համար պահանջվում է դասանյութն ավելի ընկալելի դարձնել՝ հիմնվելով տեսողական, մանիպուլյատիվ և փորձարարական հնարավորությունների վրա: Ոչ համասեռ խմբեր ստեղծելիս պետք է հաշվի առնել բազմազանության բոլոր դրսևորումները: Խմբեր կազմելիս ուսուցիչները պետք է հաշվի առնեն աշակերտների ուժեղ կողմերը և գործի դնեն իրենց մասնագիտական փորձը՝ ներառումը լավագույնս իրականացնելու և դասարանում կամ խմբում յուրաքանչյուր երեխայի իրական ներառումը (զուտ ֆիզիկական ներկայության փոխարեն) ապահովելու համար: Բոլոր աշակերտների ակտիվ ներգրավման համար հարկավոր է մանրամասն պլանավորել դասանյութը, դերերը և պարտականությունները ու բաշխել դրանք աշակերտների միջև: Համագործակցային ուսումնառությունը կարելի է իրականացնել տարբեր մեթոդներով, ներառյալ՝ աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ, խճանկար, թիմային արագացված դասավանդում, եռաքայլ հարցազրույցի մեթոդ: Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդը կիրառելիս աշակերտներն աշխատում են թիմերով, որպեսզի բոլոր անդամները տիրապետեն իրենց առջև դրված խնդրին: Յուրաքանչյուր աշակերտ նյութի վերաբերյալ թեստ է անցնում, որի միավորները միջինացվում են ամեն թիմում: Խճանկար մեթոդը կիրառելիս խմբի յուրաքանչյուր անդամ աշխատում է փորձագիտական խմբի հետ, սովորում է թեմայի որոշակի մաս, որից հետո գնում է իր նախնական խումբը, որտեղ թիմի անդամները միասին աշխատում են՝ իրենց սովորածը միավորելու և առաջադրանքն ավարտելու համար: Թիմային արագացված դասավանդումը՝ որակյալ փոխներգործուն ուսուցումը զուգակցվում է համագործակցային ուսումնառության հետ: Աշակերտները փոքր համասեռ խմբերում թեմայի վերաբերյալ ցուցումներ են ստանում ուսուցիչ: Այնուհետև աշակերտները իրենց սովորածը օգտագործում են չորս կամ հինգ անդամից բաղկացած անհամասեռ ուսումնական թիմերում՝ իրենց բնորոշ տեմպով օգտվելով իրենց տարատեսակ կարիքներին համապատասխան նյութերից: Եռաքայլ հարցազրույցի մեթոդը ուղղված է ուրիշներին ուշադիր լսելու, նշումներ անելու, տեղեկություն հաղորդելու ունակությունների զարգացմանը: Աշակերտները բաժանվում են երեքական անդամներից բաղկացած խմբերի: Խմբի յուրաքանչյուր անդամ դեր է ստանձնում. մեկը՝ զրուցավարի, երկրորդը՝ հարցազրույցի մասնակցի, երրորդը՝ նշումներ կատարողի: Դերերը փոխվում են յուրաքանչյուր հարցազրույցից

հետո: Աշակերտները միմյանց են փոխանցում կատարված նշումների թերթիկը: Համատեղ ուսումնառությունը և համագործակցային ուսումնառությունը, չնայած իրենց միջև եղած տարբերությանը, երբեմն օգտագործվում են մեկը մյուսի փոխարեն: Համատեղ ուսումնառությունը(коллективный способ обучения, КСО) ավելի լայն հասկացություն է: Այն վերաբերվում է աշակերտների ակտիվ համագործակցությանը: Համատեղ ուսումնառության ժամանակ կիրառվում են աշակերտների թիմային աշխատանքին օժանդակելու ավելի կանոնակարգված ձևեր: Համատեղ ուսումնառության ժամանակ ուսուցիչը փորձարկում է իր փորձառու լինելը՝ աշակերտներին ուղղորդելով խմբերով աշխատելու՝ պահպանելով հստակ սահմանված կանոններն ու ստանձնելով դերերը: Հայաստանում իրագործվում են ուսումնառության թե՛ համատեղ, թե՛ համագործակցային ձևերը: Մ. Մկրտչյանը, որ հանդիսանում էր Վ. Դյաչենկոյի սաներից, այս ռազմավարությունները կիրառել է 1984թ. սկսած:

Խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ: Համագործակցային իրավիճակներում անհատները միտված են փոխներգործելու, նպաստելու միմյանց հաջողությանը, ձևավորելու ընդհանուր հետաքրքրությունների շրջանակ և կազմելու միմյանց կարողությունների մասին իրական պատկերացումներ, տալու ճշմարիտ հետադարձ կապ: Ուսուցման պլանավորումը ենթադրում է ոչ միայն դասերի պլանավորում, այլև ուսումնական գործունեության պլանավորում առավել ընդհանրական մակարդակով: Այդ առումով ստորև ներկայացվում են պլանավորմանն աջակցող մի շարք գործիքներ: Օրինակ՝ ուսումնառության դիտարկված արդյունքների կառուցվածքը (ՈՒԴԱԿ) շատ օգտակար գործիք է, եթե ուսուցիչը ցանկանում է ուսուցումը կառուցել փոքր գաղափարից ավելի ընդհանուրը տանելու մոտեցմամբ: Բլում-Անդերսոնի աստիճանակարգումը օգտակար է, եթե ուսուցիչը ցանկանում է ուսումնական գործընթացը տրոհել մասերի: Վերջին տասնամյակներում կրթության ոլորտում մեծ տարածում են գտել տաքսոնոմիաները: Դրանք նպատակ ունեն զանազանելու ուսուցման տարբեր մակարդակներ նուուսուցիչներինևուսումնականծրագրերմշակողներինօգնելուսուցումնավելիբազմազանդարձնելուևսովորողներինոտտարբերմակարդակիհմտություններուկարողություններգարգացնելուհարցերում:Տաքսոնոմիաներըկարելիէբաժանելվերլուծականիևհամադրականի:Վերջինիսդեպքումուսուցիչըաշակերտներինգիտելիքէմատուցումմասնավորիցդեպիընդհանուրըգնալով:Իսկվերլուծականիդեպքումիմացությունըբաժանվումէմասերի,ևուսուցումըկատարվումէյուրաքանչյուրիզարգացմանուղղությամբ:ԿրթությանմասնագետներՋոնԲիգսըևՔևինՔոլիսըմշակելենուսումնառությանհետաքրքիրմիաստիճանակարգում,որըսովորողներինկողմիցնյութիյուրացումըներկայացնումէ5մակարդակներով:Այնկոչվումէուսումնառությանդիտարկվածարդյունքներիկառուցվածք՝ՈՒԴԱԿ (անգլերենում՝ SOLO, Structure of Observed Learning Outcomes):Այսաստիճանակարգումըցույցէ


Ներկայացնենք ՈՐՂԱԿ աստիճանակարգումը

Գիտելիքի մակարդակը	Նկարագրությունը	Պատկերը
1. Զկապակցված Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես չեմ հասկանում»:	Սովորողն ունի չկապակցված տեղեկատվություն կյուբի մասին, որն իմաստալից չէ:	
2. Միակապ Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես որոշ բաներ հասկանում եմ»:	Սովորողը բազմաթիվ կապեր է հաստատում, բայց դեռևս չի նկատում մեծ պատկերը:	
3. Բազմակապ Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես բավականաչափ հասկանում եմ այս թեման»:	Սովորողը բազմաթիվ կապեր է հաստատում, բայց դեռևս չի նկատում մեծ պատկերը:	
4. Ամբողջացված Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես կարող եմ կապակցել թեմայի մասին իմ գիտելիքները մեծ գաղափարի հետ»:	Սովորողը տեսնում է մասերի և ամբողջի կապը:	
5. Ընդլայնված Այս մակարդակում գտնվող աշակերտն ասում է. «Ես ունեմ մի քանի գաղափար, որոնք կարող եմ կապակցել մեծ գաղափարի հետ և տեսնել նորովի»:	Սովորողը ոչ միայն տեսնում է ամբողջը, այլև կարողանում է այն տարածել այլ տիրույթի վրա:	

տալիս ուսումնական նյութի յուրացման աճն ըստ գիտելիքը կապակցելու աստիճանի՝ սկսելով գրոյական կապակցումից և ավարտելով լիարժեքով ու նոր գիտելիքի ստեղծումով:


Աստիճանակարգումը սուցիչներին հնարավորություն է տալիս ուշադրության կետերն ու մպահելու, թե ինչչափով են աշակերտները կարողանում կապակցել գիտելիքը նորահիմ անվրաստեղծել նոր գիտելիք: Հայաստանի մանկավարժական գրականության մեջ բավականաչափ ներկայացվել է Բենջամին

Բլումի աստիճանակարգումը: 20-
 րդ դարի կեսերին ձևակերպված այս աստիճանակարգումը նպատակ ունի բացահայտելու կրթության բազմազան նպատակները՝ նշելով,
 որ ուսուցման գործընթացում կարևոր է ոչ միայն գիտելիքը, այլև՝ ըմբռնումը, կիրառումը, վերլուծությունը, 2001թ.-
 համադրումը նաբժնորումը:
 ին Բլումի աշակերտ Անդերսոնը մասնակի փոփոխություն կատարեց աստիճանակարգմանն ախնական տարբերակում՝ այն դարձնելով ավելի տրամաբանված:



Ի տարբերություն ՈՒԴԱԿ աստիճանակարգման, որը համադրական է, Բլումի-Անդերսոնի մոտեցումը վերլուծական է: Երկուսն էլ կարևոր են դասապրոցեսում: ՈՒԴԱԿ-ը կարելի է օգտագործել մասերից ամբողջը գնալու նպատակով, իսկ Բլում-Անդերսոնը՝ ամբողջից մասերը գնալու նպատակով: Բլումի աստիճանակարգման հետ կապված տարածված մի սխալ կա: Այն հաճախ ներկայացվում է բուրգի տեսքով: Մինչդեռ Բլումը իր տեսությունը բացատրելու համար երբևէ չի օգտագործել բուրգը: Բուրգի տեսքով ներկայացնելը տպավորություն է ստեղծում, որ վերևում գտնվող հմտություններն ավելի բարդ են և կարևոր, քան ներքևում գտնվողները: Մինչդեռ Բլումը նման դասակարգում չի արել: Հետևաբար՝ սխալ է այն տեսակետը, որ գիտելիքը և սուցման ստորին մակարդակն է: Շատ կարևոր է ուսուցման փուլային պլան ավորումը: Մենք հաճախ մտածում ենք, որ ուսուցումը տեղի է ունենում գիտելիքի փոխանցում-գիտելիքի յուրացում մեխանիզմով: Մինչդեռ իրականում սովորելու գործընթացը փուլային է: Եվ ուսուցումը տեղի է ունենում աստիճանական ձևով: Դասի հիմքը ուսուցման նպատակն է, և ուսուցչին՝ սովորողի ղեկավարությունը պետք է ուղղված լինի այդ նպատակի իրագործմանը: Նպատակով են պայմանավորվում դասի ընթացքը, մեթոդների, միջոցների ու գնահատման ընտրությունը: Գոյություն ունեն գնահատման երկու փոխկապակցված ձևեր՝ ձևավորող (ուսուցանող) և միավորային:

Types of Assessments



Դասին պատակի ընկալումը թույլ է տալիս սովորողին դառնալ գործընթացի կազմակերպման գործունակ մասնակից:

Վերջնաբարձր քննարկումները սպեքտրի հասկանալի լինելու սովորողներին՝ նրանց դարձնելով գնահատման չափանիշների մշակման մասնակից:

Նպատակներն ու կնկալվող արդյունքները սպեքտրի կառուցված լինելու (գրատախտակի, պաստառի, էկրանինսայլն), որպեսզի ուսուցիչն ու սովորողները հնարավորություն ունենան անդրադառնալ ուղղանց և ստուգելու իրենց ձեռք բերումները:

Ձևավորող գնահատումը ուսուցիչ և սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է՝ երկկողմ գործունեության ճշգրտման, ուսուցման գործընթացի բարելավման և արդյունավետության բարձրացման նպատակով: Հետադարձ կապը ուսուցիչին հնարավորություն է տալիս

պատկերացնելու, թե ինչպես է ընթանում ուսուցման գործընթացը, տեղեկատվություն է տրամադրում սովորողներին ձեռք բերումների և ժվարությունների մասին:

1.2. Արդյունքներ

- Ավանդական եղանակով դասավանդումը նախատեսված է միջին վիճակագրական աշակերտի համար:
- Ուսուցիչները դասավանդման նոր մեթոդների և մոտեցումների տիրապետելու կարիք ունեն:
- Ներառական կրթություն իրականացնող դպրոցներում տարբերակված ուսուցման կիրառումը կարևոր մոտեցում է:
- Խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար համագործակցային բազմազան հմտություններ են սահմանափակում:
- Գնահատումը և տարբերակված ուսուցումը փոխկապակցված են:
- Ձևավորող գնահատումը ուսուցչի սովորողների համատեղ հետադարձ կապի անընդհատությունն է:
- Աստիճանակարգում ուսուցիչներին հնարավորություն է տալիս ուշադրության կետերն ու մաքսիելու, թե ինչ չափով են աշակերտները կարողանում կապակցել գիտելիքը կիրառական վրաստեղծել նոր գիտելիք:

Օգտագործված նյութեր

1. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Եր.: Ֆրիդրիխ Էբերտի մանադրամ, Հայաստան 2020.- 74 էջ:
 2. Արդյունահենդասընթացների կրթական ծրագրերի մշակում. դասախոսի ձեռնարկ./ Ա. Բուդաղյան, Ա. Գրիգորյան- Եր.: 2017.- 284 էջ:
 3. <https://kznakgnahatum.blogspot.com/p/blog-page.html>
- 12
4. <https://www.depauw.edu/files/resources/krathwohl.pdf>
 5. Ավագյան Ա., Գևորգյան Ե., Գևորգյան Ս.,
Կյուրեղյան Հ., Գրիգորյան Ռ., (Խմբ.) (2019)
Ներառական կրթության ռազմավարություններ: Դասագիրք:
Մինեապոլիս, Մինեսոթա, ԱՄՆ.
Մինեսոթայի համալսարան: ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստան ն.Խ.
Արվյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան, Երևան,
Հայաստան, 249 էջ:
 6. Лебединцев В.Б. Теоретико-методологические аспекты перехода к нефронтальным системам обучения // Отечественная и зарубежная педагогика. 2016. № 5. С. 47-54
 7. <https://thesecondprinciple.com/teaching-essentials/beyond-bloom-cognitive-taxonomy-revised/>